

► Ֆիզիկական անձանց,
այդ թվում՝ անհատ
ձեռնարկատերերի ավանդները
երաշխավորված են բանկում՝
ներդրման պահից,
ինչի համար ավանդատուի
կողմից որևէ գործողություն
կամ ծախս չի պահանջվում:



Հիմնադրամի նպատակն է՝

Հայաստանի Հանրապետության բանկային
համակարգի կայունության և հուսալիության
ապահովումը՝ ֆիզիկական անձանց և անհատ
ձեռնարկատերերի բանկային ավանդների
հատուցումը երաշխավորելու միջոցով:

Հիմնադրամը երաշխավորում է

Հայաստանի Հանրապետության տարածքում
գործող առևտրային բանկերում, ինչպես նաև
Հայաստանի Հանրապետության տարածքում
ստեղծված օտարերկրյա բանկերի
մասնաձյուղերում ներդրված ավանդները:

**Հատուցման դեպքում
ավանդատուն իր երաշխավորված
ավանդը ստանալու համար
պետք է ներկայացնի.**

Դիմում-պահանջ

Անձը հաստատող փաստաթուղթ

Այն անձը հաստատող փաստաթղթերը,
որոնք ավանդատուն ներկայացրել է
բանկ իր ավանդը ձևակերպելու համար

Սոցիալական ապահովության քարտ,
իսկ դրա բացակայության դեպքում
տեղեկանք այն չունենալու մասին

Անհրաժեշտության դեպքում՝ անվճա-
րունակ բանկի նկատմամբ պահանջը
հավաստող փաստաթղթեր (ավանդա-
յին պայմանագիր, բանկային գրքույկ,
այլ փաստաթղթեր):

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Խորենացի 15,
«Էլիտ Պլազա» գործարարական համալիր,
2-Ա5 գրասենյակ
Հեռ.՝ +374 1058 35 14
Էլ. հասցե՝ info@adgf.am

adgf.am



ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆիզիկական անձանց
բանկային ավանդների երաշխավորողը
**Ավանդների հատուցումը երաշխավորող
հիմնադրամն է**



ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգով:

Երաշխավորված ավանդ է համարվում

Բանկին տրամադրված գումարը, որը ենթակա է վերադարձման կամ վճարման ավանդատուին

Բանկային հաշիվների վրա գտնվող միջոցները

Բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված միջոցները

Վերը նշված դրամական միջոցների վրա հաշվարկված տոկոսագումարները

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ԶԱՓԵՐՆ ԵՆ

Միայն
ՀՀ դրամով ավանդի
դեպքում

16 միլիոն ՀՀ դրամ

Միայն
արտարժույթով
ավանդի դեպքում

7 միլիոն ՀՀ դրամ

ՀՀ դրամով և արտարժույթով ավանդների դեպքում

Եթե դրամային
ավանդը ավելի է
7 միլիոն ՀՀ դրամից

Եթե դրամային
ավանդը պակաս է
7 միլիոն ՀՀ դրամից

Միայն դրամային
ավանդը՝ մինչև
16 միլիոն ՀՀ դրամ

Դրամային ավանդն
ամբողջությամբ,
արտարժույթային
ավանդը՝
7 միլիոն ՀՀ դրամի և
դրամային ավանդի
տարբերության
չափով

- ▶ Բանկային ավանդի հատուցումը կատարվում է ՀՀ դրամով:
Արտարժույթային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:
- ▶ Ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 ՀՀ դրամից:



Հիմնադրամի միջոցների ձևավորման հիմնական աղբյուրները բանկերի կողմից վճարվող երաշխիքային վճարներն են և այդ միջոցների կառավարումից ստացված եկամուտները:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ՎԱՏԱՅՐՈՒԹՅՈՒՆ
ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ**